# Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
## 1945---46 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՎԱ
## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանն ունի դպրանոցական (միջնակարգ) և ճեմարանական (բարձրագույն) բաժիններ։*

*Հոգևոր Ճեմարան ընդունվում են 18—35 տարեկան քաղաքացիները։*

*Դպրանոցական բաժնում ընդունվում են առնուազն հայոց յոթամյա դպրոցներ ավարտողները, իսկ ճեմարանական բաժնում՝ տասնամյա և բարձրագույն դպրոց ավարտողները։*

*Հոգևոր Ճեմարան մտնել ցանկացողները պետք է դիմում ներկայացնեն Ս. Էջմիածնի Հայոց Գերագույն Հոգևոր Խորհրդին և դիմումի հետ ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝*

*1. ծննդյան վկայական.*

*2. ուսման վկայական.*

*3. ընդարձակ ինքնակենսագրություն.*

*4. երկու լուսանկար, սեփական ստորագրությամբ։*

*Դիմումներն ընդունվում են մինչև 1945 թվի սեպտեմբերի 25-ը։*

*Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է և ուսումը ձրի։*

*Հասցե՝ Էջմիածին— Հայոց Գերագույն Հոգևոր Խորհուրդ։*

ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека